ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՍՏԻ

Քաղաք՝ Իջևան
Ամսաթիվ՝ 22.07.2025թ.
Ժամը՝ 11.00
Վայրը՝ Իջևանի համայնքապետարան

Նիստի նախագահող.
Հրանտ Ներսեսյան, Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Նիստին մասնակցել են.
1. Արարատ Պարոնյան – հանձնաժողովի նախագահի տեղակալ / Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ

2. Լիլիթ Սարիբեկյան – հանձնաժողովի քարտուղար / Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

3. Աննա Օհանյան - Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի 1-ին կարգի մասնագետ / հանձնաժողովի անդամ

4. Լիանա Ծովանյան – Իջևանի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

5. Տիգրան Հարությունյան - Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար / հանձնաժողովի անդամ

6. Արթուր Ամիրյան - Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ / հանձնաժողովի անդամ

7. Արման Ղալթախչյան - Իջևան համայնքի ավագանու անդամ /հանձնաժողովի անդամ

8. Հակոբ Սարիբեկյան - Դիտավան բնակավայրի վարչական ղեկավար /հանձնաժողովի անդամ

ՕՐԱԿԱՐԳ

Իջևան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում նախապատրաստական փուլի ավարտի ամփոփում:

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Հրանտ Ներսեսյանին.

- Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին, նշեց մասնակցային բյուջետավորման գործընթացի կարևորությունը և արձանագրեց, որ գործընթացի նախապատրաստական փուլն ավարտվել է:
- Իջևան համայնքի ավագանու 2025թ. մայիսի 30-ի թիվ 86 որոշմամբ սկիզբ է դրվել մասնակցային բյուջետավորման գործընթացը: Առաջարկեց կազմել միջոցառումների իրականացման ժամանակացույց և ներկայացնել Իջևան համայնքի ղեկավարի հաստատմանը:

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արարատ Պարոնյանին.

Նա ներկայացրեց նախապատրաստական փուլի ավարտի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն.

- Համայնքի ղեկավարի 2025թ. հուլիսի 21-ի թիվ 895 որոշմամբ ստեղծվել է գործընթացի կառավարման հանձնաժողով, հաստատվել են հանձնաժողովի իրավասությունները, գործընթացի իրականացման ընթացակարգերը, չափանիշները և ձևաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի ամփոփումը գնահատել դրական:

2. Միջոցառումների իրականացման ժամանակացույցը ներկայացնել համայնքի ղեկավարի հաստատմանը:

3. Սկսել իրազեկման փուլը:

4. Նիստի արձանագրությունը հրապարակել համայնքի պաշտոնական կայքում:

Նիստի ավարտի ժամը՝ 13:00

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հրանտ Ներսեսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լիլիթ Սարիբեկյան